Diploma Programme
Programme du diplôme
Programa del Diploma

Armenian A: literature – Standard level – Paper 1
Arménien A : littérature – Niveau moyen – Épreuve 1
Armenio A: literatura – Nivel medio – Prueba 1

Wednesday 10 May 2017 (afternoon)
Mercredi 10 mai 2017 (après-midi)
Miércoles 10 de mayo de 2017 (tarde)

1 hour 30 minutes / 1 heure 30 minutes / 1 hora 30 minutos

Instructions to candidates

- Do not open this examination paper until instructed to do so.
- Write a guided literary analysis on one passage only. In your answer you must address both of the guiding questions provided.
- The maximum mark for this examination paper is **[20 marks]**.

Instructions destinées aux candidats

- N'ouvrez pas cette épreuve avant d'y être autorisé(e).
- Rédigez une analyse littéraire dirigée d'un seul des passages. Les deux questions d'orientation fournies doivent être traitées dans votre réponse.
- Le nombre maximum de points pour cette épreuve d'examen est de **[20 points]**.

Instrucciones para los alumnos

- No abra esta prueba hasta que se lo autoricen.
- Escriba un análisis literario guiado sobre un solo pasaje. Debe abordar las dos preguntas de orientación en su respuesta.
- La puntuación máxima para esta prueba de examen es **[20 puntos]**.

2217 – 0507
© International Baccalaureate Organization 2017

International Baccalaureate
Baccalauréat International
Bachillerato Internacional

Հետևյալ հատվածներից **մեկի** մասին գրեք մի գրական մեկնաբանություն: Ձեր պատասխանը պետք է շոշափի ներկայացված երկու հարցումները:

1.

— Ուրեմն, այստեղ եք ծնվել, — ուզեցի հարցնել նաև, թե ինչու է հյուրանոցում, մի՞թե հարազատներ չունի, բայց զսպեցի, — լավ քաղաք է:
— Բոլոր քարերին կարոտել էի:

(Ծերունին փակեց աչքերը: Թվա՞ց, թե՞ նորից լսեց այն զրույցը.
— Ի՞նչ ասաց հայրդ:
— Չհարցրի: Ասաց, որ վաթսուն ռուբլի թոշակ են նշանակել: Պիտի մորը գերեզմանաքար դնի: Ասաց կարոտել է քաղաքին:
— Ինչո՞վ է քարը դնելու, — հարսը ձայնը բարձրացրեց, — վաթսուն ռուբլի չի՞ թոշակը, — երկու զույգ կոշիկ է անում: Ի՞նչ ես մտածում:
— Ի՞նչ պիտի մտածեմ:
— Երկու սենյակ ունենք, չորս հոգով ենք:
— Թեյ խմե՞ց:
— Խմեց: Երեք բաժակ:
— ……
— Երկու սենյակ ունենք, չորս հոգով ենք, աղջիկդ էլ տասնհինգ տարեկան է… Շարունակությունը չլսեց. այդքանն էլ չէր ուզենա լսած լինել, պարզապես հարսն ու որդին խոհանոցում էին, ինքը՝ լողարանում, իսկ միջնապատը բարակ էր:)

Ծերունին բացեց աչքերը, նայեց ինձ մի տեսակ վախեցած: Երևի մտածեց, որ ես լսեցի իր լսածը, բայց ես ի՞նչ կարող էի լսել: Ես պարզապես տեսա, որ նա երկար լռեց և հետո բացեց աչքերը:
— Լավ պանիր էր, չէ՞, — ի վերջո ասաց:
— Շատ:
— Երեք օր առաջ հին ընկերոջս հանդիպեցի: Միասին ենք սովորել: Գերեզմանատուն տարավ, ասաց՝ մերոնք, մեր ընկերները, հիմա էստեղ են: Նայեցի քարերին: Ոչ մեկին ես մեռած չէի տեսել ու դժվար էր հավատալ, թե քարի տակ նրանք են: Քանի՞ տարեկան կլինեմ ես…
— Վաթսուն - վաթսունհինգ:
— Յոթանասունչորս:
Ես նայեցի ծերունուն: Այդ պահին նրան հարյուր տարի էլ կարելի էր տալ: Ինձ թվաց, թե ուրիշ մարդ է պառկած մահճակալին, ուրիշ:
— Չեմ սիրում գերեզմանատուն գնալ, — ասացի ես, — ստիպված մտածում ես մահվան մասին: Ջերմուկ չե՞ք ուզում:
— Շնորհակալ եմ: Այդ աղջկա ուզածն ի՞նչ է:
— Որ գրեմ տղայի մասին:
— Գրելու՞ եք:
— Տղային էլ պիտի տեսնեմ, քաղաքում չէ: Չգիտեմ:
— Ինչ հիմար բան պատմեց գայլի ու մարդու մասին, չէ՞…

(Առավոտյան, երբ ճամպրուկն առած դուրս էր ուզում գալ, որդին հարցրեց.
— Ո՞ւր,
— Մի երկու օր ուզում եմ ընկերոջս, Ալեքենց տանը մնալ, ինքը շատ խնդրեց։ Էլի կգամ մի երկու- երեք օր կմանմ ու հայդա։
— Ո՞նց թե հայդա, բա ասում էիր…
— Հավատացի՞ր։ Ո՞վ է ինձ թոշակի ուղարկողը։ Արձակուրդ եմ եկել։ Տղան նայեց կասկածանքով, իսկ հարսն ասաց.
— Հայրիկն առողջ տղամարդ է, մի տասը տարի էլ կաշխատի։
Եկավ հյուրանոց։ Իսկ երեկոյան՝ ինֆարկտ։ Բժիշկն ասաց, որ շատ վտանգավոր չէ, եթե երրորդըհանկարծ… Նույնիսկ թույլ տվեցին մեկ-մեկ վեր կենալ։ Առաջինը անցյալտարի խփեց։)

Ես հանկարծ հիշեցի, որ մինչև հիմա չեմ հարցրել նրա անունը։
— Մուրադ Վարդապետյան, — ասաց նա, — պարզապես Մուրադ որ ասես, լավ կլինի։
Ես ժպտացի։ Քառասուն տարով նա մեծ էր ինձնից, և մենք երեսուն չորս տարվա անծանոթներ էինք։ Ու հիմա պիտի Մուրադ ասեի։

Վարդգես Պետրոսյան
Ապրած և չապրած տարիներ հավաքածուից, «Աշխարհի ամենալավ մարդը» (1982)

(ա) Քննարկեք այն, թե ինչպես են ծերունու և փաստաբանի հարաբերությունները բացահայտում այս հատվածում տեղ գտած առանցքային թեման։

(բ) Ի՞նչ գեղարվեստական հնարքների միջոցով է հեղինակը իրադարձությունների ամբողջական պատկերը բացահայտում ընթերցողի համար։

2.

Սիրո հիասթափություն

Պատանի սիրտս բաժակ էր բյուրեղ,
Որ լցվեց մի օր գինով աչքերիդ,
Ու ես այն գինով հարբած խելահեղ
Քո ոտքերն ընկա ու դարձա գերիդ:
Բայց դու փշրեցիր իմ սիրտը մատաղ,
Ա՜խ դու փշրեցիր գավաթն իմ սրտի,
Թափվեց իմ գինին… արյունաշաղախ,
Ու ցնդեց պատրանքն իմ կույր կարոտի, –
Բացվեցին սրտիս աչքերը բոլոր,
Անցավ խելահեղ գինովությունս,
Կուչ եկավ խաբված իմ սիրտը մոլոր,
Ամաչեց, որ քեզ նմանն էր բույնս:
Դու ցոփ գինետան մի բաժակ էիր,
Սիրույս գինին էր աչքերս կապում,
Ա՜խ, ինչ լավ եղավ, որ փշրտեցիր,
Քանզի քեզ այժմ քեզնով եմ չափում,
Քեզանով, ինչպես լուսինը՝ լուսնով,
Որ լուսնացել էր սիրույս արևով,
Քեզնով եմ չափում,
Ոչ թե ցնորքով իմ սիրահառաչ,
Որ իմ կույր սիրով աչքերս էր կապում,
Ինձ ծունկի բերում, որպես սիրատանջ,
Խաբված աստծուն՝ սատանի առաջ…
Ա՜խ արևն էլ է երբեմն խաբվում՝
Մեռած լուսնյակին իր լույսով չափում:

Հովհաննես Շիրազ, *Քնար համամարդկային (Միայն սերը), հատոր երրորդ* (1984)

(ա) Քննարկեք, թե պատկերավորման ինչ միջոցներ է հեղինակը գործածել՝ արտահայտելու համար տվյալ բանաստեղծության կենտրոնական թեման:

(բ) Քննարկեք այն, թե ինչպես է տվյալ բանաստեղծության մեջ օգտագործվում հեղինակի ձայնը՝ ցույց տալու համար երիտասարդի սիրո մասին փոփոխական ընկալումը: